

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՐԱՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Ա.Հ. Երիցյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վ.Վ. Ստեփանյան

Իրավաբանական գիտությունների
թեկնածու
Ս.Ա. Մինասյան

Առաջատար կազմակերպություն՝

Եվրոպական կրթական
տարածաշրջանային ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի մարտի 18-ին, ժամը 14:30-ին ՀՀ ԲՈՂ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, ք. Երևան, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2016 թվականի փետրվարի 16-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր**

Ա. Հ. Խաչատրյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը: Մարդու արժանապատվությունը ներկայումս համարվում է հասարակության զարգացման գլխավոր արժեքային կողմնորոշիչներից մեկը: Քաղաքացիական հասարակության ձևավորումը և իրավական պետության կառուցումն անհնարին կլինի, եթե հասարակական գիտակցությունում և պրակտիկայում չարմատավորվի մարդու արժանապատվության էությունը, իմաստավորումն ու նշանակությունը ցանկացած պետության և հասարակության բնական գործունեության համար:

Անձի արժանապատվությունը՝ մարդկային քաքաքակրթության հիմնարար հայեցակարգերից մեկն է, չափանիշ՝ հասարակության զարգացման համար: Անձի արժանապատվության պաշտպանությունը ժողովրդավարական և իրավական պետությունում կրում է համընդհանուր և առաջնային բնույթ, այն կազմում է փիլիսոփայական և իրավաբանական բազան, որի վրա կառուցվում է տվյալ պետությունում մարդու իրավունքների ողջ իրավական համակարգը:

Մարդու արժանապատվությունն արժեքների չափանիշ է, որը հնարավորություն է տալիս գնահատել, արժևորել ոչ միայն պետությունը, իրավունքը, իրավակարգը, օրինականությունը, այլ նաև քաղաքացիական հասարակությունում մարդու արժանապատվության զարգացման և դրա իրականացման հնարավորության աստիճանը:

Ժամանակակից՝ աշխարհը չի կարելի պատկերացնել առանց մարդու արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքի: Մարդու արժանապատվությունը ներկայումս համարվում է հասարակության զարգացման գլխավոր կողմնորոշիչներից մեկը: Քաղաքացիական հասարակության ձևավորումը և իրավական պետության կառուցումն անհնարին կլինի, եթե հասարակական գիտակցությունում և պրակտիկայում չարմատավորվի մարդու արժանապատվության էությունը:

Անհատի արժանապատվությունն է հանդես՝ զալիս պետության, պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց մարդու, անհատի նկատմամբ վերաբերմունքի կառուցման նկատմամբ պահանջները սահմանող կարևորագույն արժեքավոր հիմքը և չափանիշը:

Անհատի արժանապատվությունն առանցքային նշանակություն ունի սահմանադրական իրավակարգավորումների արժեքանության և մեթոդաբանության տեսանկյունից:

Անհատի արժանապատվությունը՝ սահմանադրության արժեհամակարգում այն բարձրագույն արժեք է, որով պայմանավորվում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև իրավակիրառման բովանդակության կանխորոշիչ լինելու դրա հատկությունը:

Անհատի արժանապատվությունը հանդես է զալիս որպես մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակարգի և այդ իրավունքների ու ազատությունների պահպանության և պաշտպանության համակարգի համակարգաատեղծ տարր, այն առաջնային և անհրաժեշտ է մարդու այլ հիմնական իրավունքների պահպանման և պաշտպանության համար, հանդիսանում է սահմանադրաիրավական կարգավորման գլխավոր նպատակը:

Իրավաբանական գիտության մեջ անհատի արժանապատվության ճանաչման, պահպանության և պաշտպանության սահմանադրաիրավական հարցերը դիտարկվել են բազմաթիվ աշխատանքներում, սակայն դրանց որոշ չափով մակերեսային ուշադրություն է դարձվել առավել ընդհանուր ենթատեսքատվ, կամ դրանք շոշափվել են իրավական հետազոտությունների այլ հարակից թեմատիկ ուղղություններով, դրա համար էլ նշված հարցերը անհրաժեշտ է գնահատել որպես բավարար չափով չհետազոտված:

«Անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման, դրա վերաբերյալ տարբեր հայացքների ու մոտեցումների համեմատական և պատմաիրավական վերլուծությունը վկայում է, որ այդ հասկացության իրավական մեկնաբանությունը տարաբնույթ է ընկալվել պայմանավորված պատմական տարբեր ժամանակաշրջաններում հասարակության զարգացման այս կամ այն մակարդակով:

Յուրաքանչյուր դարաշրջան յուրովի է լուծել մարդու արժանապատվության հավերժ խնդիրները, նորովի վերաիմաստավորելով ճշմարտությունները, որոնք նախորդների կողմից բացարձակ էին համարվում:

«Արժանապատվություն» ընդլայնված ըմբռնումը պայմանավորված է եղել տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող էթիկափիլիսոփայական հայեցակարգերով, որոնցում հենց արժանապատվությունը կամ դրա պատմական հումանիշները (օրինակ պատիվը) մեկնաբանվում էին տարբեր իմաստներով:

Իրենց ակունքներով կանտոնական իրավունքի քրիստոնեական ավանդույթներ ունեցող և ռոմանագերմանական և անգլոսաքսոնական իրավական համակարգերում արժանապատվությունը հանդես է գալիս որպես կենսաբանական, բարոյական, կրոնական և սոցիալական բնույթի որակների համախմբություն, որոնք անահատականացնում են մարդուն որպես անհատ, առանձնացնում են նրան բնության այլ արարածներից և նպաստում են վարքի որոշակի չափանիշների նրա կողմնորոշմանը:

Մարդկային արժանապատվության հայեցակարգը ծառայում է որպես ինքնատիպ համակարգ, որտեղ իրենց տեղն են գտնում, փոխգործակցում մարդու կարևորագույն իրավունքները, սկսած անձնական անձեռնմխելիությունից և վերջացրած ազատ տնտեսական գործունեությամբ:

Աշխարհի բոլոր իրավական համակարգերը իրենց մեջ ներառում են ոչ միայն օրենսդրի պատկերացումներն արժանապատվության վերաբերյալ իրավաբանական առումով, այլ նաև կրոնական, բարոյական և այլ տեսանկյուններից:

Մարդու իրավունքների մասին ժամանակակից հարցադրումները, համաշխարհային քաղաքակրթության բնույթով ու արդի մակարդակով պայմանավորված, ողջ նորությամբ ու առանձնահատկություններով հանդերձ, հենվում է մարդկության նախորդ հարուստ փորձի վրա:

Մարդու իրավունքները սոցիալ-պատմական երևույթ են: Չբացառելով մարդու իրավունքների մասին ժամանակակից զարգացած պատկերացումների նորահայտ բնույթը, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել նախորդ իրավական հայացքների հետ արդի պատկերացումների պատմական հաջորդականությունը: Այս իմաստով իրավունքի և իրավական ուսմունքի պատմությունը միաժամանակ նաև մարդու իրավունքների մասին պատկերացումների ձևավորման և էվոլյուցիայի պատմությունն է՝ սկսած ամենապարզունակ, սահմանափակ հայացքներից մինչև ժամանակակից զարգացած հայեցակարգերը:

«Արժանապատվության» եզրույթի իրավական բովանդակությունը և նորմատիվ գործառույթային դերակատարությունը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել է փոփոխությունների, և չնայած Սահմանադրությունը, ինչպես նաև ընթացիկ օրենսդրությունն ամրագրում են դրույթներ արժանապատվության առնչությամբ, այնուամենայնիվ, իրավական համակարգում ոչ միանշանակ կերպով է ընկալվում արժանապատվության կարգավիճակը, ինչն էլ պայմանավորում է արժանապատվության հստակ իրավական հայեցակարգի բացակայությունը:

Թեմայի շրջանակներում բարձրացված խնդիրների ուսումնասիրությունը և այդ խնդիրներին արդյունավետ լուծումներ, մեխանիզմներ մշակելու նպատակով կատարված վերլուծությունները նույնպես պայմանավորում են ատենախոսական թեմայի արդիականությունը:

Ոլորտի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս կատարել մի շարք եզրահանգումներ, որի արդյունքում առաջ են գալիս հիմնախնդիրներ, որոնք իրենց հերթին պահանջում են մշակված սահմանումներ և օրենսդրական կարգավորումներ:

Ատենախոսական թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Ատենախոսության մեջ քննարկվել են մեծաթիվ հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ստացել իրավաբան գիտնականների աշխատություններում: Մակայն, այդ հետազոտություններում նույնպես մարդու արժանապատվության հարգման բովանդակության և երաշխիքների հարցերը շոշափվել են առանց այդ հասկացության իրավական էության վերլուծության:

Հայրենական ու արտասահմանյան հեղինակների հետազոտությունները միայն մասամբ են շոշափում սույն ատենախոսության հետազոտության առարկան և չեն պարունակում մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական ինստիտուտի անհրաժեշտ աստիճանի համալիր նկարագրություն, ինչը թույլ չի տալիս համարել, որ այդ հասկացությունը հետազոտվել է անհրաժեշտ և բավարար չափով:

Ատենախոսական հետազոտության տեսական հիմքեր են հանդիսացել ինչպես հայ իրավաբանների աշխատությունները, մասնավորապես Գ.Հարությունյանի, Ա.Երիցյանի, Վ.Այվազյանի, Վ.Ներսիսյանցի, Լ.Խ. Քալաշյանի, Գ.Մուրադյանի, Ա.Վաղարշյանի և այլոց, այնպես էլ օտարազգի գիտնականների աշխատությունները, որոնց շարքում կարելի է առանձնացնել Ի.Ն.Շտանկոյի, Ա.Խ. Աբաշիձեյի, Ս.Ա.Ավագյանի, Ա.Ս. Ավտոնոմովի, Մ.Վ. Բազայի, Վ.Վ.Բեգրախի, Վ.Գ.Բեսսարաբովի, Վ.Վ.Բյաժենայի, Վ.Վ.Բոյցովայի, Վ.Վ.Գրեբեննիկովայի, Յու.Ա. Դմիտրիևայի, Ա.Ս. Դուգենցի, Ա.Գ. Զալոմնի, Ա.Բ.Զելենցովի, Վ.Դ.Զորկինի, Ի.Ա.Բասևի, Ա.Յա.Կապուստինի, Դ.Ա. Քերիմովի, Ե.Ի.Կոլովայի, Մ.Ն. Կուզնեցովի, Օ.Ե. Կուտաֆինի, Ա.Ա.Լևի, Գ.Վ.Մայցևի, Ա.Ա.Սամեդովի, Ի.Մ.Մացկևիչի, Վ.Ն.Մախովի, Ն.Վ.Մելնիկովի, Տ.Ֆ.Մինյազևայի, Ն.Ա.Միխայլևայի, Մ.Վ. Նեմիտինայի, Ս.Գ.Նովիկովայի, Ա.Ֆ.Նոգդրաչևի, Ի.Վ.Պոնկինի, Յու.Վ.Ստեպանենկոյի, Բ.Ա.Ստրաշունի, Վ.Ս.Սիրիխի, Յու.Ա.Տիխոմիրովի, Ա.Յա.Սուլաբևի, Տ.Յա. Խաբրիևայի, Վ.Ե.Չիրկինի, Վ.Բ.Յաստրեբովի, գիտական աշխատությունները: Ատենախոսությունում ուսումնասիրվել են անտիկ և միջնադարյան համաշխարհային հռչակ ունեցող մտածողների աշխատությունները: Դրանցից կարելի է առանձնացնել Պլատոնի, Արիստոտելի, Թոմա Աքվինացու, Սպինոզայի, Կանտի, Ցիցերոնի, Հեգելի և այլոց աշխատությունները:

Ատենախոսի կողմից հետազոտվել է գիտամենագրական ընդարձակ հայրենական և արտասահմանյան նյութեր, անհատի արժանապատվության պաշտպանության հարցերով իրապարակումներ:

Ատենախոսական հետազոտության նորմատիվային հիմքերը: Ատենախոսության համար նորմատիվային հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ օրենքները, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները, օտարերկրյա պետությունների հիմնական օրենքները:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտ են հանդիսանում մարդու արժանապատվության սահմանադրաիրավական պաշտպանության իրականացման ընթացքում ձևավորվող հասարակական հարաբերությունները:

Ատենախոսական հետազոտության առարկա են հանդիսանում՝ մարդու արժանապատվության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, մարդու արժանապատվության պաշտպանության գծով պետական

իշխանության մարմինների գործունեությունը, ինչպես նաև դրա հետ կապված արդիական տեսական և գործնական խնդիրները:

Ատենախոսական հետազոտության նպատակը և խնդիրներն են՝ ուսումնասիրել, վերլուծել և բացահայտել .

- իրավաբանական գիտության մեջ «անձի արժանապատվության» հասկացության մեկնաբանությունների հարաբերակցությունը,

- անձի «արժանապատվություն» եզրույթի ընկալումները որպես մարդու իրավունքների հիմքի, մարդկային հատկանիշի, որպես բարոյագիտական կատեգորիաի առանձնահատկությունները,

- արժանապատվության և պատվի հարաբերակցությունը իրավունքի ու բարոյականության համատեքստում,

- անձի արժանապատվության իրավական բովանդակությունն ու կառուցվածքը,

- անձի արժանապատվության ամրագրման սահմանադրական մոդելները,

- անձի արժանապատվության սահմանադրաիրավական բովանդակության զարգացումը,

- մարդու արժանապատվությունը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների համակարգում,

- մարդու արժանապատվության վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի դոկտրինալ մոտեցումները,

- մարդու արժանապատվության պաշտպանության միջազգային իրավական երաշխիքները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական (դիալեկտիկական, տրամաբանական, վերլուծական, պատմական, ընդհանրացման, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները), այնպես էլ մի շարք մասնավոր մեթոդներ՝ պատմական-իրավական վերլուծության, ՀՀ սահմանադրական դատարանի մոտեցումների, դատական պրակտիկայի ամփոփման, իրավահամեմատական, ձևական-իրավական և այլ մեթոդներ: Հիշյալ մեթոդների համակցված կիրառությունը հնարավորություն է տվել բացահայտելու հետազոտության շրջանակներում կիրառվող հիմնական հասկացությունների բովանդակությունն ու առանձնահատկությունները:

Ատենախոսական հետազոտության արդյունքները և գիտական նորույթը. Կատարված հետազոտության արդյունքները հանդիսանում են գիտական նորույթի հատկանիշներով օժտված և պաշտպանության համար առաջադրվող հետևյալ դրույթները.

1. Հայեցակարգային մոտեցումների և իրավական աղբյուրների համակարգային վերլուծության հիման վրա հեղինակի կողմից տրվել է անձի արժանապատվության սահմանադրաիրավական հետևյալ ձևակերպումը, ըստ որի՝ այն իրենից ներկայացնում է անձի իրավական կարգավիճակի տարր կազմող հանրաձանսչ և բացառապես սահմանադրորեն պայմանավորված ու որոշակիացված սկզբունք, որի պաշտպանությունը օրենսդրական և ինստիտուցիոնալ գործիքների միջոցով երաշխավորվում է պետության կողմից չբացառելով նաև դրա ինքնապաշտպանության ձևական իրականացման հնարավորությունը ցանկացած որևէ սոսնձգություններից:

Այնուհետև, որպես անձի սոցիալ-իրավական բնութագրիչ և սուբյեկտիվ (անձնական) իրավունքների ու ազատությունների կարևոր բաղադրիչ անձի արժանապատվությունը հեղինակի կողմից դիտարկվում է որպես մարդ-հասարակություն-պետություն փոխհարաբերությունների կարգավորիչ և յուրաքանչյուր մարդու սոցիալական արժևորման հիմք ժամանակակից հասարակության հիմնարար օրինաչափությունների ու սոցիալ-բարոյագիտական հատկանիշների համատեքստում:

Միաժամանակ, հեղինակը բնութագրելով անձի արժանապատվությունը որպես մարդկային հատկանիշ, նա այն դիտարկում է նաև որպես իրավագիտակցության և

մարդկային մշակույթի բնականոն ու սոցիալական արժեքային համակարգ, որն արտահայտվում է արժանապատվություն կրողի աշխարհայացքային գնահատականներով, հոգեբանական զգացումներով, և պայմանավորված է անձի ինքնաընկալմամբ, ինքնարտահայտմամբ և սեփական անձի նկատմամբ այլոց վերաբերմունքի բարոյահոգեբանական մոտեցմամբ:

2. Արժանապատվության ու պատվի հարաբերակցության և դրանց իրավական ու բարոյական արժևորման վերաբերյալ արված դատողությունների ու առկա իրավական կարգավորումների համադրված վերլուծությունների արդյունքում հեղինակը կողմից արվել է հետևյալ եզրահանգումը, որ իրավունքի ու բարոյականության սերտ կապն ու փոխգործակցությունը մեծապես նպաստում են արժանապատվության ու պատվի որպես սոցիալական կարգավորիչների դերի կարևորմանը, դրանց իրացման արդյունավետության բարձրացմանը և հասարակական հարաբերությունների կայունացմանն ու ամրապնդմանը:

3. Մարդու արժանապատվության կառուցվածքում կարևոր նշանակություն ունեն դրա դրսևորման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմեր: Ընդ որում, էթե անձի արժանապատվության օբյեկտիվ կողմն արտացոլում է անձի այն հատկանիշների ամբողջությունը, որոնցով նախանշվում են հասարակությունում նրա հեղինակության և իր նկատմամբ այլ անձանց վերաբերմունքի արտաքին կողմերը, ապա սուբյեկտիվ կողմն արտացոլում է անձի ինքնաընկալման, ինքնագիտակցման և ինքնագնահատման ներքին սահմանները: Այս տեսանկյունից աշխատանքում հեղինակն առանձնացնում է անձի արժանապատվության կառուցվածքային այնպիսի տարրեր, ինչպիսին են ընդհանուր արժանապատվություն, անհատական-անձնային արժանապատվություն, սոցիալական արժանապատվություն (որոշակի սոցիալական խմբին կամ ժամանակավոր (իրավիճակային) սոցիումին պատկանելը), գենդերային կնոջ ու տղամարդու արժանապատվություն, մասնագիտական արժանապատվություն, կրթամշակութային արժանապատվություն, ազգային արժանապատվություն, կրոնական արժանապատվություն, տարիքային արժանապատվություն և այլն:

4. Հեղինակը գտնում է, որ մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես անձի գոյության և զարգացման անբաժանելի մաս կրելով դինամիկ բնույթ: Պետության և հասարակության խնդիրն է ապահովել մարդու արժանապատվության իրավունքի իրականացումն ու երաշխավորել այդ իրավունքի պահպանումն ու պաշտպանությունը: Ընդ որում, այդ իրավունքի միայն օրենքով ամրագրելը դեռ բավարար չէ դրա լիարժեք իրականացման համար, ուստի, հեղինակը հիմնավորում է այն, որ անհրաժեշտ է նախանշել նաև համապատասխան պայմաններ, ինչպիսին են, օրինակ, պետության կողմից դրանց պաշտպանության իրականացման մեխանիզմների սահմանումը կամ հասարակության մեջ իրավագիտակցության բարձրացման ապահովումը և այլն: Ինչ վերաբերում է անձի արժանապատվության իրավունքի իրացման ապահովման խնդրին, ապա հեղինակը գտնում է, որ այդ գործընթացը դինամիկ և կայուն զարգացում ապահովվող այն տարրերի համակարգն է, որտեղ պետք է երաշխավորվի մարդու արժանապատվության իրավունքի պահպանումը, իրականացումը, և կիրառումը:

5. Հիմնավորվել է այն, որ անհատի արժանապատվությունը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ու դրանց պահպանության ու պաշտպանության սահմանադրական համակարգաստեղծ այն տարրն է, որի ապահովումն ու պաշտպանությունը պետության պոզիտիվ պարտականությունն է՝ անկախ այդ իրավունք կրողի պահանջներից: Այսպես, օրինակ, մի կողմից, պետությունը պարտավոր է պաշտպանել անձի արժանապատվությունն այլոց ոտնձգություններից և անհրաժեշտության դեպքում կիրառել համարժեք ներգործության միջոցներ, իսկ, մյուս կողմից, պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել մարդուն արժանավայել նվազագույն նյութական կենսապայմաններ իր սոցիալական միջավայրում,

6. Աշխատանքում սահմանվում է, որ մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները կազմում են Մահմանադրությամբ և օրենքներով ամրագրված այն ընդհանուր պայմաններն ու հատուկ իրավաբանական միջոցները, որոնք փաստացի հնարավորություն են ընձեռում իրատեսակները մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև երաշխավորել դրանց պաշտպանությունն ու օրինական շահերի բավարարումը: Դրա հիմնավորմամբ պայմանավորված և մարդու արժանապատվության հայեցակարգային հիմնախնդիրները հաղթահարելու ու իրավական պաշտած պաշտպանությունն ապահովելու նպատակով, հեղինակն ընդհանրացնելով սահմանադրական նորմերի և Մահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծության արդյունքները, կատարում է իրավական մոդելավորում, որ. ա) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս պետության և հասարակության կողմից պահպանվող ու պաշտպանվող բարձրագույն սոցիալական արժեք միայն այն դեպքում, երբ մարդն ունի իրական հնարավորություն գործելու իր արժանապատվությանը համապատասխան և պաշտպանելու իր իրավունքները որպես հարգման ու պաշտպանության ենթակատար, բ) մարդու արժանապատվության ապահովումն այն անհրաժեշտ պայմանն է, որի պարագայում երաշխավորվում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրացումը, գ) Հայաստանի Հանրապետությունում անձի արժանապատվության պաշտպանության իրավունքի գիտակցումը սահմանադրական բարեփոխումների կարևորագույն հարցադրումներից է, և քանի դեռ մարդու արժանապատվության ապահովման հիմնահարցերը սահմանադրական կարգավորումներում կրում են հոչակագրային բնույթ, չի կարող երաշխավորվել Մահմանադրության գերակայությունը և մարդու իրավունքների պաշտպանության գործուն կառուցակարգերի առկայությունը:

7. Մահմանադրաիրավական նոր կարգավորումների համատեքստում, մարդու արժանապատվության ճանաչման և պաշտպանության միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների, երաշխիքների և կառուցակարգերի համալիրը մշակելիս, աշխատանքում առաջարկվում է ազգային օրենսդրությունը ներդաշնակեցնել մարդու արժանապատվության պաշտպանության երաշխավորման համար էական նշանակություն ունեցող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով սահմանված միասնական իրավական հետևյալ անպիսի չափորոշիչների հաշվառմամբ, ինչպիսիք են ա) պետության կողմից մարդու արժանապատվության որպես միջազգային իրավական պահպանության օբյեկտի սահմանադրորեն ամրագրումը, բ) մարդու արժանապատվության պաշտպանության ուղղակի երաշխիքներ ամրագրող և մանրամասնող դրույթների ամրագրում, գ) մարդու արժանապատվության պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ սահմանող կամ միջնորդավորված ձևով մարդու արժանապատվության պաշտպանությանն ուղղված իրավական սկզբունքների ու նորմերի համալիր դրույթների սահմանում:

Ատենախոսության հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել սահմանադրական իրավունք, մարդու իրավունքներ, պետության և իրավունքի տեսություն դասընթացներում և հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև այն բոլոր դասընթացներում որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է անձի արժանապատվության հիմնահարցերին: Ատենախոսության մեջ կատարված սահմանադրաիրավական վերլուծությունները կարող են նպաստել հայրենական իրավական համակարգում արժանապատվության նոր ամբողջական հայեցակարգի մշակման, ինչպես նաև մարդու արժանապատվության պաշտպանության արդյունավետության բարձագման աշխատանքներին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնում, որտեղ իրականացվել են աշխատանքի քննարկումը և գրախոսումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հրատարակված գիտական հոդվածներում, խորհրդաժողովներին ներկայացված զեկույցներում, որոնցում ներկայացվել են ատենախոսության մի շարք կարևոր հիմնադրույթներ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ութ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակները և ինդիքները, օբյեկտը և առարկան, ատենախոսության տեսական, նորմատիվ և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության գիտատեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Անձի արժանապատվության մասին իրավական և սոցիալ-փիլիսոփայական պատկերացումների ձևավորման ու զարգացման էվոլյուցիան»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Անձի արժանապատվության տեսական-իրավական բովանդակությունն ու կառուցվածքը»** վերտառությամբ, Հեղինակի կողմից կատարվել է «Անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման, դրա վերաբերյալ տարբեր հայացքների ու մոտեցումների համեմատական և պատմաիրավական վերլուծություն՝ անձի արժանապատվության իրավական բովանդակության և կառուցվածքի նրա տարբեր կողմերի ուսումնասիրության միջոցով: Մարդու արժանապատվությունը վերացական չէ, այն պոտենցիալ կայուն իրավունք չէ, այլ, բարդ դինամիկ համակարգ է՝ կայուն և փոփոխական տարբերով: Մարդու արժանապատվությունը իր մի շարք բաղադրիչներով մշտապես գործում և մշտապես իրացվում է, այն հանդես է գալիս որպես անձի գոյության և զարգացման անբաժանելի մաս և կրում է դինամիկ բնույթ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Արժանապատվության և պատվի հարաբերակցությունը իրավունքի ու բարոյականության համատեքստում»** վերտառությամբ, Հեղինակի կողմից ներկայացվում է արժանապատվության ու պատվի որպես իրավական ու բարոյական արժեքների վերաբերյալ դատողությունների ու դրանց իրավական կարգավորումների համադրված վերլուծություն: Ուսումնասիրելով իրավունքի ու բարոյականության սերտ կապերն ու փոխգործողությունները՝ Հեղինակը հանգեց այն պնդմանը, որ դրանք մեծապես նպաստում են սոցիալական այդ երկու կարգավորիչների արժանապատվության ու պատվի դերի կարևորմանը, դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, հասարակական հարաբերությունների կայունացմանն ու ամրապնդմանը:

Երրորդ ենթագլխում՝ **«Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների ու ազատությունների հիմք և մարդկային հատկանիշ»** վերտառությամբ, Հեղինակն անդրադարձել է «Անձի արժանապատվություն» եզրույթի ի սկզբանե ընկալմանը, որպես բարոյագիտական կատեգորիա, որպես մարդու իրավունքների հիմք և մարդկային հատկանիշ: «Անձի արժանապատվություն» եզրույթի ուսումնասիրության նպատակ է հանդիսացել նախ, վերհանել այդ հասկացության բովանդակությունը, ուսումնասիրել պատմական էվոլյուցիան այնուհետև, պարզաբանել դրա իմաստը և

վերջում, հստակեցնել խնդրո առարկայի վերաբերյալ առկա գիտամեթոդաբանական պատկերացումները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Մարդու արժանապատվության պաշտպանության միջազգային իրավական կարգավորման հիմնախնդիրները»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Անձի արժանապատվության ամրագրման սահմանադրական մոդելները արտասահմանյան երկրներում»** վերտառությամբ, Հեղինակի կողմից կատարվել է արտասահմանյան երկրներում անձի արժանապատվության իրավունքի ամրագրման սահմանադրական մոդելների համեմատական հետազոտություն, որը հնարավորություն է տվել եզրակացություն կատարել այն մասին, որ օրենսդիրը տարբեր աստիճանով է գնահատում տվյալ եզրույթի նշանակությունը հասարակության իրավական կյանքում: Դրանից ելնելով, մենք առանձնացրել ենք սահմանադրական մոդելների երեք մակարդակ, որոնցով աստիճանավորումը պայմանավորված է օրենսդրի քաղաքացիների արժանապատվության երաշխիքների նկատմամբ մոտեցմամբ:

Սահմանադրական մոդելների բաշխումն ըստ մակարդակների՝ կախված քաղաքացիների արժանապատվության պաշտպանության երաշխիքից, հնարավորություն է տալիս սահմանադրական իրավունքի ոլորտում հետազոտողին որոշել, թե ինչպիսի նշանակություն է ձեռք բերում տարբեր երկրներում սոցիալական քաղաքականության և քաղաքացիական իրավունքների պաշտպանության վիճակը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Մարդու արժանապատվության պաշտպանության միջազգային իրավական երաշխիքները»** վերտառությամբ, Հեղինակի կողմից հետազոտվել է մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական ինստիտուտը ներառող միջազգային իրավական սկզբունքների, նորմերի, երաշխիքների ու կառուցակարգերի համալիր համակարգ, որը կոչված է երաշխավորելու արժանապատվության պահպանումն ու պաշտպանությունը: Կատարվել է «Մարդու արժանապատվության» վերաբերյալ միջազգային իրավական կարգավորումների կառուցվածքային ու համակարգային վերլուծություն, որի արդյունքում առանձնացվել է մարդու արժանապատվության արժեքանական բովանդակությունն ու նշանակությունն արտացոլող միջազգային իրավական հիմնարար բնութագրիչները:

Երրորդ ենթագլխում՝ **«Մարդու արժանապատվության վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի հայեցակարգային մոտեցումները»** վերտառությամբ, Հեղինակի կողմից վեր են հանվել մարդու արժանապատվության պաշտպանության երաշխավորման համար էական նշանակություն ունեցող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները: Դրանք առավել արդիական են հատկապես սահմանադրաիրավական նոր կարգավորումների և եվրոպական միասնական իրավական չափորոշիչների սահմանման համատեքստում: Մարդու արժանապատվության պաշտպանության, ապահովման և պահպանման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտած դոկտրինալ մոտեցումների կառուցվածքահամակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մարդու արժանապատվության արժեքային բովանդակությունն արտացոլող և որպես մարդու արժանապատվության ապահովման, պահպանման և պաշտպանության երաշխիքներ ծառայող հիմնարար միջազգային իրավական դրույթների համախմբությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական առանձնահատկությունները և զարգացումները սահմանադրական բարեփոխումների համակերպումում**» վերտառությամբ, Հեղինակը համակարգային ամբողջականության մեջ վերլուծել է Հայաստանի Հանրապետությունում անձի արժանապատվության սահմանադրական զարգացումների պատմական ընթացքը և հայեցակարգային մոտեցումների տեսանկյունից առանձնացրել է զարգացումների հիմնական փուլերը:

Հայեցակարգային մոտեցումների և իրավական աղբյուրների համակարգային վերլուծության հիման վրա տրվել է անձի արժանապատվության սահմանադրաիրավական ձևակերպումը:

Երկրորդ ենթագլխում՝ «**Մարդու արժանապատվության ապահովման սահմանադրական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում**» վերտառությամբ, Հեղինակի կողմից դասակարգվել են մարդու արժանապատվության սահմանադրական երաշխիքները: Կատարվել է սահմանադրության նորմերի և Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումներում ամրագրված դրույթների համակարգային վերլուծություն:

Եզրակացության մեջ հեղինակն ընդհանրացված ներկայացրել է հետազոտության կարևոր հետևությունները, մասնավորապես՝

1. «Անձի արժանապատվություն» հասկացության իրավական բովանդակության և կառուցվածքի վերլուծությունը բացահայտում է երկու էական տարրերի առկայություն, դրանք են անփոխարինելի կամ հաստատունը և փոխարինելի կամ փոփոխվողը:

Բացի այդ, մարդու արժանապատվության կառուցվածքում կարևոր նշանակություն ունեցող տարրերից կարելի է առանձնացնել այդ հասկացության դրսևորման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը:

Անձի արժանապատվության սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերն ունեն տարբերություններ, և դրանցից յուրաքանչյուրն իր կառուցվածքով համապատասխանում է անձի արժանապատվության իրավական բովանդակության վերոնշյալ անփոփոխելի և փոփոխելի տարրերի համակցությանը:

Այսպիսով, անձի արժանապատվությունը բարդ և միաժամանակ բազմակողմ հասկացություն է, որի բովանդակությունը և կառուցվածքը հնարավոր է բացահայտել և ներկայացնել նաև նրա տարբեր կողմերի ուսումնասիրության միջոցով:

Դրանցից են. ա) ընդհանուր և մասնավոր կենսաբանականը, բ) անհատական անձնականը (անձի արժանապատվություն),

գ) սոցիալականը (որոշակի սոցիալական խմբին կամ ժամանակավոր (իրավիճակային) սոցիումին պատկանելը), դ) գենդերայինը (սեռային՝ կնոջ արժանապատվություն, տղամարդու արժանապատվություն), ե) ազգայինը, կրոնականը, ռասայականը (անձի արժանապատվություն՝ ըստ ազգի, կրոնի և ռասայական պատկանելության), ը) տարիքայինը:

«Մարդու արժանապատվություն» և «անձի արժանապատվություն» հասկացությունների առկա բնորոշումների կառուցվածքային, համակարգային, տրամաբանական և իրավալեզվաբանական վերլուծությունը, ինչպես նաև «անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման խնդրի տարբեր կողմերը, «մարդու արժանապատվության» պաշտպանության, այդ թվում պատվի և արժանապատվության վերաբերյալ գիտական հետազոտությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել նրա էական հատկանիշների համակարգը:

Աձի արժանապատվությունը կարելի է բնորոշել՝ որպես մարդկային հատկանիշ, իրավագիտակցության և մարդկային մշակույթի բնականոն և սոցիալապես պայմանավորված արժեքային համակարգ և միաժամանակ, մարդու իրավունքների և ազատությունների հենք, որն արտահայտվում է արժեքային-աշխարհայացքային գնահատականներով, հոգեբանական զգացումներով, և պայմանավորված են անձի

ինքնարևակալումով, ինքնարտահայտմամբ և սեփական անձի հանդեպ այլ անձանց վերաբերմունքի բարոյահոգեբանական ընկալմամբ:

Մարդու արժանապատվության արտահայտման, դրսևորման և պաշտպանության տարբեր սապեկությունների, ինչպես նաև մարդու արժանապատվության իրավունքի իրականացման ընկալման և մեկնաբանման խնդրի, այդ իրավունքի պաշտպանության, այդ թվում պատվի և արժանապատվության գործերի վերաբերյալ գիտական հետազոտությունների արդյունքների կառուցվածքային-համակարգային, տրամաբանական և իրավալեզվաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս անձի արժանապատվության (մարդու արժանապատվության) պահպանումը, իրականացումը, կիրառումը և կիրարկումը բնորոշել որպես կոնկրետ անձի (որպես կրողի և դրսևորողի) սեփական արժանապատվության պաշտպանության (պետության և հասարակության կողմից որպես սոցիալական նշանակություն ունեցող, պահպանվող և պաշտպանվող արժեք) և դրսևորման, արտահայտման, պաշտպանության և կյանքի կոչելու այլ մեխանիզմի իրական հնարավորությունների տիրապետում, այդ թվում նաև այլ անձանց հետ հարաբերություններում, դրա հետ կապված իրավունքների ամբողջություն, ինչպես նաև առօրյա ընթացիկ անմիջական և իրավիճակային մարմնավորում:

2. արժանապատվության ու պատվի՝ որպես իրավական ու բարոյական արժեքների վերաբերյալ բերված դատողությունների ու դրանց իրավական կարգավորումների համադրված վերլուծությունների համատեքստում անհրաժեշտ է վեր հանել հետևյալը.

1. Եթե իրավական նորմերը սահմանվում են պետության կողմից, ապա բարոյական նորմերը ծագում են տարերայնորեն,

2. Եթե իրավական նորմերն իրենց ամրագրումն են ստանում գրավոր աղբյուրներում, ապա բարոյական նորմերը գոյություն ունեն մարդկանց գիտակցության մեջ,

3. Եթե իրավական նորմերի իրացումն ապահովված է պետական հարկադրանքի հնարավորությամբ, ապա բարոյական նորմերը կյանքի են կոչվում մարդկանց կամարտահայտության ու հասարակական կարծիքի ուժով,

4. վերջապես՝ եթե իրավական կարգավորման ոլորտն այն հարաբերություններն են, որոնք գտնվում են պետական վերահսկողության ներքո, ապա բարոյական կարգավորման ոլորտները պետությանն ենթակա չեն:

Այնուամենայնիվ, իրավունքի ու բարոյականության սերտ կապերն ու փոխգործողությունները մեծապես նպաստում են սոցիալական այդ երկու կարգավորիչների արժանապատվության ու պատվի դերի կարևորմանը, դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, հասարակական հարաբերությունների կայունացմանն ու ամրապնդմանը:

3. Անձի արժանապատվության վերաբերյալ գիտական հետազոտությունների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ հասկացությունը բնորոշող իրավական, սոցիալ-փիլիսոփայական հատկանիշներից առավել էականները հետևյալներն են.

1. Անձի արժանապատվությունը բնածին է, այն առաջանում է մարդու ծնվելու պահից: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մինչև մարդու ծնվելը՝ պտղի մոտ, անձի արժանապատվության իրավունքի տեսական հարցը դեռևս իր համարժեք լուծումը չի ստացել, անգամ այդ տեսակետի կողմնակիցներն ունեն տարաձայնություններ պտղի /էմբրիոնի հասակի գնահատման հարցում, որից էլ հետևում է այդ իրավունքը:

Ընդ որում, ինչպես համարում են իրավագետներ Վ.Ա. Կարտաշևը և Ե.Ա.Լուկաշևան, բնականների թվին են պատկանում ոչ թե մարդու բոլոր իրավունքները, այլ, առաջին հերթին, միայն ունիվերսալները, կյանքի իրավունքը, քաղաքացիության իրավունքը, արժանապատվության իրավունքը, անձնական ազատության ու անձեռնմխելիության իրավունքը և այլ իրավունքներ:

Մահմանադրական իրավունքն ու դոկտրինան համարում են, որ բնածին իրավունքներն արդեն իսկ ըստ բնորոշման «մեկնվում են ոչ թե որպես ինքնին կամ ձեռքբերովի, այլ որպես բնածին և, պայմանականորեն արտահայտելով, նախապետական: Դրանք պատկանում են մարդուն ի ծնե և ծննդյան իրավունքով: Այդ իրավունքները շնորհված չեն իշխանության կողմից, ծագում են նրանցից անկախ և առանց նրա համաձայնության և չեն կարող հետ վերցվել: Պետությունը պարտավոր է ճանաչել այդ իրավունքները, ամրագրել դրանք սահմանադրության մեջ և պաշտպանել հնարավոր բոլոր միջոցներով: Դա իրեն ժողովրդավարական համարող յուրաքանչյուր պետության սրբազան պարտքն է: Բնական, անբաժանելի, անօտարելի իրավունքները սկսեցին ամբողջապես նույնանալ հիմնական, հիմնարար իրավունքների հետ»:

2. Անձի արժանապատվությունը որոշակիացված է մշակութային և սոցիալական առումներով, այսինքն նրա բովանդակությունը, ինչպես նաև պահպանման և պաշտպանության միջոցները կախված են հասարակության կյանքի կոնկրետ պատմական պայմաններից:

3. Անձի արժանապատվությունը չի վերանում մարդու մահվանից հետո, այլ ընդամենը, անձի արժանապատվության պաշտպանության հետ կապված իրավասությունները փոխակերպվում են և փոխանցվում նրա հարազատներին և պետությանը, թեև իր այդ նոր որակով այն ևս մշտական չէ և ունի աստիճանաբար վերանալու միտում:

4. Անձի արժանապատվությունն անքակտելի է և անօտարելի: Մարդու արժանապատվությունը չի կարող օտարվել, քանի որ այն անձի բնական իրավունքների բաղկացուցիչ ու անքակտելի մասն է կազմում: Հետևաբար անձի արժանապատվությունն անփոխանցելի է: Այն չի կարող որևէ կերպ փոխանցվել որևէ մեկին կամ փոխանակվել, վաճառվել, ժառանգվել, կամ և այլ կերպ օտարվել մարդկային անհատակնությունից:

5. Անձի արժանապատվության երաշխիքները ներառում են պետականության տարրեր, այսպես, պետությունն անվերապահորեն ընդունում է անձի արժանապատվությունը, ուստի և պահպանում ու երաշխավորում դրա պաշտպանությունը:

6. Անձի արժանապատվությունը հանդես է գալիս որպես սոցիալական փոխհարաբերություններում ինքնագիտակցման ու ինքնատիրապետման արժեքային հիմք, ընդ որում, մի կողմից, մարդը գիտակցում է ինքն իրեն որպես արժեք և, լինելով եզակի ու անկրկնելի, կառուցում է իր վարքագիծը ու վերահսկում իր գործողությունները այնպես, որ չտոնահարի այլ մարդկանց արժանապատվությունը, իսկ, մյուս կողմից սեփական անձի արժանապատվության՝ որպես ինքնագիտակցության ձևի վրա է հիմնվում և կառուցվում ինքնահարգանքը, անհատի պահանջը սեփական անձի հանդեպ:

7. Անձի արժանապատվությունն ունի համընդհանուր բնույթ, այսինքն այն պետության կողմից դիտարկվում է ոչ թե ընդհանրության մեջ, այլ առանձին-աձանձին՝ անհատապես, և այդ իմաստով անձի արժանապատվությունը հիմք է հանդիսանում ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության համար:

8. Անձի արժանապատվությունն ունի երկակի նշանակություն միաժամանակ հանդես գալով ոչ միայն որպես հասարակական միջանձնային հարաբերությունների գործոն այլև մարդու անձնական կյանքի ոլորտի գործոն:

9. Անձի արժանապատվության պաշտպանության իրավական միջոցների անհրաժեշտ, սակայն ոչ բավարար լինելն արտահայտվում է նրանում, որ անձի արժանապատվության հանդեպ ոտնձգությունը ոչ միշտ է հնարավոր կանխարգելվել վարչաիրավական, քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական գործիքակազմով, և հաճախ մարդու արժանապատվության կարգավորիչ, և երաշխիք են հանդիսանում

բարոյական նորմերը (այդ հասկացության կառուցվածքի ոչ միատարր բնույթից ելնելով):

10. Անձի արժանապատվության «շարժունակությունը» կամ «փոփոխականությունը» կապված են այն բանի հետ, որ անձի կողմից սեփական մարդկային արժանապատվության հոգեբանական ընկալումը կարող է փոխվել կրթական մակարդակի բարձրացման, կյանքի փորձի կուտակման հետ:

Անդրադառնալով այդ հատկանիշների համակարգային վերլուծությանը, անհրաժեշտ է կարևորել այն, որ եթե պատիվն ու արժանապատվությունն առաջանում են միաժամանակ՝ մարդու ծնվելու պահին, և դրանց գոյությունը ժամկետային սահմանափակում չունի, ապա անձի պատվի և արժանապատվության իրավունքը կարող է պաշտպանվել նաև նրա մահվանից հետո:

Միաժամանակ, պետք է նկատել, որ անձի արժանապատվությունն անխզելիորեն կապված է մարդու ունակության հետ՝ գնահատելու և համեմատելու սեփական արարքները հասարակության պահանջների հետ, ճնշելու սեփական ոչ իրավաչափ ձգտումները և մտադրությունները, որոնց իրականացումը կարող է գնահատվել որպես անպատվություն: Այն առավելապես ընկալվում է որպես համեմատաբար անկախ, անձնային, անհատական գործոն, որը գոյություն ունի օբյեկտիվորեն՝ հասարակության և պետության շրջանակից դուրս, սակայն մյուս կողմից, կախված է կոնկրետ հասարակության զարգացման մակարդակից, սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական պայմաններից՝ նրա պատմական զարգացման կոնկրետ փուլում:

4. Անձի արժանապատվությունը կարելի է դիտարկել որպես հասարակական կյանքում մարդկային գործոնի բաղկացուցիչ մաս, անձի սոցիալ-իրավական բնութագրի, նրա սուբյեկտիվ (անձնական) իրավունքների, պարտականությունների, ազատությունների կարևոր բաղադրիչ, մարդու և հասարակության, մարդու և պետության, մարդկանց միջանձնային տարբեր հարաբերությունները կարգավորող գործիք, իրավագիտակցության ու իրավական անհրաժեշտ ֆենոմեն, սոցիալական կապերի համակարգ, մարդկանց փոխհարաբերությունների համակարգ, որը բարդ և բազմակողմ իրավական գործիքակազմի ազդեցության առարկա է, յուրաքանչյուր մարդու սոցիալական արժեքի ընդունման արտացոլումն է որպես ժամանակակից հասարակության հիմնարար օրինաչափություն, սոցիալ-բարոյագիտական հատկությունների ամբողջություն:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է նշել հետևյալը.

ա) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես սահմանադրական իրավունքների հիմք և նպատակ, դրանց սկզբունք, որին համապատասխան պետք է կառուցվի մարդու սահմանադրական իրավունքների ամբողջ համակարգը, պետք է ամրագրվեն պետության, իշխանության ողջ համակարգի անհատի արժանապատվությունն ապահովելու նկատմամբ պարտականությունները,

բ) մարդու արժանապատվության ապահովումը պետության պարտականությունն է՝ անկախ այդ իրավունքի կրողների պահանջներից: Պետությունն այդ առումով պարտավոր է պաշտպանել անձի արժանապատվությունն այլ մասնավոր անձանց տարաբնույթ ոտնձգություններից, անհրաժեշտության դեպքում անգամ քրեական իրավունքին բնորոշ ներգործության միջոցներով,

գ) արժանապատվության պաշտպանությունն ենթադրում է պետության պոզիտիվ պարտականությունը ապահովելու տվյալ սոցիալական միջավայրում մարդուն արժանավայել նվազագույն նյութական կենսապայմաններ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից պետությունում մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես սոցիալապես նշանակալի, պետության ու հասարակության կողմից պահպանվող և պաշտպանվող արժեք միայն այն դեպքում, երբ մարդն ունի իր արժանապատվության հետ ներդաշնակության մեջ գործելու իրական

հնարավորություն, այն կյանքում իրականացնելով որպես անձեռնմխելի և հարգանքի ու պաշտպանության ենթակա նրա անձի անբաժանելի որակ,

դ) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգի արժեքային հիմքը, ընդ որում, մարդու արժանապատվության իրավունքի նկատմամբ մարդու կյանքի իրավունքը հանդիսանում է անհրաժեշտ պայման, մարդու արժանապատվության իրավունքի իրացման հնարավորության երաշխիք,

ե) մարդու արժանապատվության հասկացության արժեքային ներուժը հանդիսանում է հետևանքն այն բանի, որ սահմանադրությունը մարդուն, նրա իրավունքները և ազատությունները ժողովում է բարձրագույն արժեքի նշանակությամբ, և այդ իմաստով այն առանցքային նշանակություն է ձեռք բերում սահմանադրական իրավակարգավորումների արժեքանության և մեթոդաբանության տեսանկյունից,

զ) մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ և բացարձակ, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական կարգավիճակի կարևորագույն բնութագրիչը, որով պայմանավորվում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև իրավախրատման բովանդակության կանխորոշիչ լինելու դրա հատկությունը:

է) անհատի արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների և դրանց պահպանության և պաշտպանության սահմանադրական համակարգաստեղծ տարր, այն միաժամանակ առաջնային և անհրաժեշտ է մարդու այլ հիմնական իրավունքների պահպանման և պաշտպանության համար:

5. Արտասահմանյան երկրներում անձի արժանապատվության իրավունքի ամրագրման սահմանադրական մոդելների համեմատական հետազոտությունը հնարավորություն է տալիս եզրակացություն կատարել այն մասին, որ օրենսդիրը տարբեր աստիճանով է գնահատում տվյալ եզրույթի նշանակությունը հասարակության իրավական կյանքում: Դրանից ելնելով, մենք առանձնացրել ենք սահմանադրական մոդելների երեք մակարդակ, որոնցով աստիճանավորումը պայմանավորված է օրենսդրի քաղաքացիների արժանապատվության երաշխիքների նկատմամբ մտոնցմամբ:

Բնվերտառիվ-արժեքանական մակարդակը ներառում է մի շարք եվրոպական պետություններ՝ Գերմանիա, Հունաստան, Իտալիա, Իսպանիա, Լեհաստան, Շվեյցարիա, Շվեդիա և մի շարք այլ պետություններ, որտեղ պետության մարդու արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու պարտականությունը սահմանված է օրենսդրի կողմից որպես առաջնահերթ: Այսպես, Գերմանիայում պետական իշխանության մարդկային արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու պարտականությունը վերագրված է հիմնական օրենքի սահմանադրական սկզբունքներին, իսկ ազատ անձը և նրա արժանապատվությունն իրենցից ներկայացնում են սահմանադրական կարգի ներսում իրավունքի բարձրագույն արժեք:

Ենթատեքստային միջնորդավորված մակարդակը միավորում է այնպիսի երկրներ, ինչպիսին են Բելառուսը, Բելգիան, Սլովակիան և այլն, որոնց սահմանադրություններում մարդկային արժանապատվության հարգանքի իրավունքը դիտարկվում է այլ իրավունքների և ազատությունների անձնական պատվի և բարի համբավի պահպանության, մասնավոր ընտանեկան կյանքին անհիմն միջամտելուց պաշտպանության ենթատեքստում:

Բնական ապրիոր մակարդակը ներառում է այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ավստրիան, Ֆրանսիան և այլն, որոնց սահմանադրություններում պետության կողմից արժանապատվության պաշտպանության երաշխավորման հարցերը կարգավորող հոդված չկա, կամ (ինչպես Ֆրանսիայի Սահմանադրությունում) բացակայում է

պետությունների մեծամասնության համանման օրենքների համար սովորական մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների թվարկումը:

Սահմանադրական մոդելների բաշխումն ըստ մակարդակների կախված քաղաքացիների արժանապատվության պաշտպանության երաշխիքից, հնարավորություն է տալիս սահմանադրական իրավունքի ոլորտում հետազոտողին որոշել, թե ինչպիսի նշանակություն է ձեռք բերում տարբեր երկրներում սոցիալական քաղաքականության և քաղաքացիական իրավունքների պաշտպանության վիճակը:

6. Մարդու արժանապատվությունը ներկայումս համարվում է հասարակության զարգացման գլխավոր արժեքային կողմնորոշիչներից մեկը: Քաղաքացիական հասարակության ձևավորումը և իրավական պետության կառուցումն անհնարին կլինի, եթե հասարակական գիտակցությունում և պրակտիկայում չարմատավորվի մարդու արժանապատվության էությունը, իմաստավորումն ու նշանակությունը ցանկացած պետության և հասարակության բնական գործունեության համար:

Քաղաքակիրթ հասարակությունում պետության հիմնական գործառույթը պետք է լինի անձի արժանապատվության պաշտպանությունը: Մարդու արժանապատվության էությունը արտացոլող հիշատակված միջազգային իրավական դրույթների իմաստավորումն ու արժևորումը ազգային օրենսդրությամբ պայմանավորված կլինի պետության գոյության արդարացվածությունը և միայն այն դեպքում, եթե վերջինիս գործունեությունն ուղղված կլինի մարդու արժանապատվության ու նրա իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

7. Մարդու արժանապատվության պաշտպանության, պապահովման և պահպանման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտած դոկտրինալ մոտեցումների կառուցվածքահամակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մարդու արժանապատվության արժեքային բովանդակությունն արտացոլող և որպես մարդու արժանապատվության ապահովման, պահպանման և պաշտպանության երաշխիքներ ծառայող հիմնարար միջազգային իրավական դրույթների համախմբությունը:

Մարդու արժանապատվության ճանաչմանը և պաշտպանությանը վերաբերող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայում արտահայտված իրավական դիրքորոշումները Հայաստանի Հանրապետության համար պետք է դիտարկվեն որպես արժեքային համակարգի պաշտպանության իրականացման որոշակի իրավական հիմքեր:

8. Մենք հնարավոր համարեցինք առաջարկել անձի արժանապատվության սահմանադրաիրավական հետևյալ ձևակերպումը, ըստ որի այն իրենից ներկայացնում է անձի իրավական կարգավիճակի տարր կազմող հանրաճանաչ և բացառապես սահմանադրորեն պայմանավորված ու որոշակիացված սկզբունք, որի պաշտպանությունը օրենսդրական և ինստիտուցիոնալ գործիքների միջոցով երաշխավորվում է պետության կողմից չբացառելով նաև դրա ինքնապաշտպանության ձևական իրականացման հնարավորությունը ցանկացած որևէ ոտնձգություններից:

Մարդու արժանապատվության նկատմամբ նման դիրքորոշումը միանշանակ ցույց է տալիս, որ այն հասարակությունը դիտում է իբրև սոցիալական բարձրագույն արժեք և միաժամանակ ճանաչվում է յուրաքանչյուր կոնկրետ անձնավորության անհատականությունն ու եզակիությունը: Այսպիսի ըմբռնումը մեզնից յուրաքանչյուրին պարտադրում է նաև հարգել ցանկացած մարդու արժանապատվությունը անկախ այն բանից այդ մարդը չափահաս է, թե՞ անչափահաս, հոգեկան հիվանդ է, թե՞ առողջ, կրթված է, թե՞ ոչ:

Մարդու արժանապատվությունը հարգելը նշանակում է նաև, որ չի թույլատրվում հոգեֆիզիկական ճնշում գործադրել մարդկանց վրա, չի թույլատրվում խոշտանգել նրանց և առհասարակ գործադրել նրանց արժանապատվությունը նվաստացնող միջոցներ կամ առանց նրանց համաձայնության ենթարկել բժշկական կամ գիտական

փորձերի: Մարդու արժանապատվությունը բացարձակ է և պետությունը պարտավոր է այն պաշտպանել ամեն տեսակի ռոնձգություններից, որտեղից էլ որ դրանք բխեն:

Հիմնավոր ենք համարում տալ Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվության սահմանադրաիրավական պաշտպանության ինստիտուտի հասկացության հետևյալ հեղինակային սահմանումը.

Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական ինստիտուտը սահմանադրական նորմերի համակարգ է, որոնք կարգավորում են հարաբերականորեն ինքնուրույն խումբ կազմող և մարդու արժանապատվության իրացման կապակցությամբ ձևավորվող համասեռ և փոխկապակցված հասարակական հարաբերությունները, որն իր մեջ ներառում է բնական իրավունքով պայմանավորված մարդու արժանապատվության արժեքի և անձեռնմխելիության սկզբունքի պետության կողմից ճանաչման, պետության կողմից պաշտպանության իրավական հիմքերը, երաշխիքները և մեխանիզմները, ինչպես նաև մարդու արժանապատվության պաշտպանության իրացման, մարդու արժանապատվության վերականգնման ու փոխհատուցման և մարդու արժանապատվության հետագա իրացման անօրինական խոչընդոտների վերացման ուղղակի, ապահովող և անուղղակի երաշխիքները:

9. Մոցիալական պետությունը, որի զարգացմանը ձգտում է Հայաստանը, հիմնվում է ոչ միայն պոզիտիվ իրավունքի տեսանկյունից զարացող, այլ նաև մարդասիրական գաղափարով բնութագրվող քաղաքացիական հասարակության վրա: Ժամանակակից հասարակարգին հարմարեցված հիմնարար բնական իրավական գաղափարները նպաստում են պետության կողմից անձի արժանապատվության որպես բոլոր գոյություն ունեցող իրավահարաբերությունների մագիստրալային, ռանցքային արժեքի ճանաչմանը:

Անհատը օժտվում է որպես իրավունքի լիարժեք սուբյեկտ հանդես գալու հնարավորությամբ, իսկ պետությունը ստանձնում է երրորդ անձանց ռոնձգություններից մարդու արժանապատվության պաշտպանության և բնակչության նկատմամբ, այդ թվում իր կողմից հարգելից վերաբերմունքի պարտավորություն:

Մարդու իրավունքների իրացման ապահովման գործում հավասար հնարավորությունները ծառայում են որպես պետության կողմից անձի արժանապատվության պահպանման ցուցանիշ:

10. Սահմանադրության նորմերի և Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումներում ամրագրված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ.

1) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս պետության և հասարակության կողմից պահպանվող ու պաշտպանվող բարձրագույն սոցիալական արժեք միայն այն դեպքում, երբ մարդն ունի իրական հնարավորություն գործելու իր արժանապատվությանը համապատասխան և պաշտպանելու իր իրավունքները որպես հարգման ու պաշտպանության ենթակա տարր,

2) մարդու արժանապատվության ապահովման այն անհրաժեշտ պայմանն է, որի պարագայում երաշխավորվում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրացումը,

3) Հայաստանի Հանրապետությունում անձի արժանապատվության պաշտպանության իրավունքի գիտակցումը սահմանադրականության կարևորագույն երաշխիքներից է, և քանի դեռ մարդու արժանապատվության ապահովման հիմնահարցերը սահմանադրական կարգավորումներում կրում են հռչակագրային բնույթ, չի կարող երաշխավորվել Սահմանադրության գերակայությունը և մարդու իրավունքների պաշտպանության գործունե կառուցակարգերի առկայությունը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի հետևյալ գիտական հրատարակումներում.

1. Արժանապատվությանը որպես մարդու իրավունքների հիմք և մարդկային հատկանիշ», «Արդարադատություն» գիտական հանդես, 2014, հունիս 2 (25), էջեր 7-12:
2. «Արժանապատվության և պատվի հարաբերակցությունը իրավունքի ու բարոյականության համատեքստում», «Արդարադատություն» գիտական հանդես, 2014, սեպտեմբեր 3 (26), էջեր 2-7:
3. «Անձի արժանապատվության իրավական բովանդակությունն ու կառուցվածքը», «Արդարադատություն» գիտական հանդես, 2014, դեկտեմբեր 4 (27), էջեր 29-34:
4. «Մարդու արժանապատվության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները», «Գիտական հոդվածների ժողովածու/ ՀՀ ԳԱԱ գիտական միջազգային կենտրոն», 2014, էջեր 44-50:
5. «Մարդու արժանապատվությունը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների համակարգում», «Եվրոպական ակադեմիա: Գիտական հոդվածների ժողովածու» 2014, գիրք 5(1), էջեր 112-115:
6. «Մարդու արժանապատվության վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դոկտրինալ մոտեցումները», «Եվրոպական ակադեմիա: Գիտական հոդվածների ժողովածու» 2014, գիրք 5(1), էջեր 116-119:
7. «Արժանապատվությունը մարդու սոցիալական արժեքային համակարգում», «Դատական իշխանություն», 2015 հունվար-փետրվար 1-2/187-188, էջեր 36-41:

МАРГАРИТА АРАМОВНА ВАРДАНИЯ
ЗАЩИТА ДОСТОИНСТВА ЧЕЛОВЕКА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ.
КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

к диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности
«Публичное право» - 12.00.02.

Защита диссертации состоится 18 марта 2016г. в 14:30 на заседании Профессионального совета 041 юриспруденции ВАК Армении, действующего в Академии государственного управления Республики Армения (0028, г. Ереван, ул. Киевян, 8).

РЕЗЮМЕ

В диссертации обоснована актуальность темы, представлены степень научной изученности темы, цели и задачи, объект и предмет исследования, теоретические, нормативные и методологические основы диссертации, научная новизна, научно-теоретическая и практическая значимость исследования, апробация результата, структура диссертации, а также представляемые на защиту положения.

Первая глава диссертации, озаглавленная «Эволюция формирования и развития правовых и социально-философских представлений о достоинстве человека», состоит из трех параграфов.

В первом параграфе, озаглавленном «Теоретико-правовое содержание и структура достоинства человека», Автором проведен сравнительный и историко-правовой анализ восприятия и толкования понятия «достоинство личности», различных взглядов и подходов к нему, путем исследования различных сторон правового содержания и структуры достоинства личности. Человеческое достоинство не абстрактно, оно является не потенциально устойчивым правом, а сложной, динамической системой с устойчивыми и изменчивыми элементами. Достоинство человека, с целым рядом элементов, постоянно действует и постоянно реализуется, оно выступает как неотъемлемая часть существования и развития личности и носит динамический характер.

Во втором параграфе, озаглавленном «Соотношение чести и достоинства в контексте права и морали», Автором представлен сочтенный анализ чести и достоинства, как рассуждений о правовых и моральных ценностях, а также их правовых регуляций. Исследуя тесные связи и взаимодействия права и морали, Автор пришла к утверждению, что они в большей мере способствуют повышению роли этих двух социальных регуляторов – чести и достоинства, повышению эффективности их деятельности, стабилизации и укреплению общественных связей.

В третьем параграфе, озаглавленном «Достоинство, как основа прав и свобод человека и человеческое свойство», Автор обращается к изначальному толкованию термина «достоинство личности», в качестве этической категории, основы прав человека и свойства человека. Целью исследования термина «человеческое достоинство» стало, во-первых, раскрытие содержания этого понятия, изучение его исторической эволюции, далее - выяснение его значения, и, наконец, внесение ясности в имеющихся научно-методологических представлениях о предмете исследования.

Вторая глава диссертации, озаглавленная «Проблемы международного правового регулирования защиты достоинства человека», состоит из трех параграфов.

В первом параграфе, озаглавленном «Конституционные модели закрепления достоинства человека в зарубежных странах», Автором проведено сравнительное исследование конституционных моделей закрепления права на защиту достоинства личности в зарубежных странах, позволившее сделать заключение о том, что значение данного термина в правовой жизни общества в разной степени оценивается законодателем. Исходя из этого, мы выделили три уровня конституционных моделей, в которых градация обусловлена подходом законодателя к гарантиям защиты достоинства граждан.

Распределение конституционных моделей по уровням в зависимости от гарантии защиты достоинства граждан, позволяет исследователю в области конституционного права установить, какое значение приобретает в разных странах состояние социальной политики и защиты гражданских прав.

Во втором параграфе, озаглавленном «Международные правовые гарантии защиты достоинства человека», Автором проведен анализ комплексной системы международных правовых принципов, норм, гарантий и институтов, включающей в себя конституционно-

правовой институт защиты достоинства человека, призванной гарантировать охрану и защиту достоинства. Проведен структурный и системный анализ международных правовых регуляций относительно «Достоинства человека», в результате которого была выделены базовые международные правовые характеристики, отражающие ценностное содержание и значение достоинства человека.

В третьем параграфе, озаглавленном «Концептуальные подходы Европейского суда по правам человека к достоинству человека», Автором рассмотрены правовые позиции и толкования Европейского суда по правам человека (далее «Суд»), имеющие существенное значение для гарантирования защиты достоинства человека. Они особенно актуальны в контексте новых конституционно-правовых регуляций и установления единых европейских правовых стандартов. Структурно-системный анализ доктринальных подходов, выраженных Европейским судом по правам человека по поводу защиты, обеспечения и охраны достоинства человека, позволяет выделить комплекс фундаментальных правовых положений, отражающих ценностное содержание достоинства человека и служащих гарантиями обеспечения, охраны и защиты достоинства человека.

Третья глава диссертации, озаглавленная «Конституционно-правовые гарантии защиты достоинства личности в Республике Армения», состоит из двух параграфов.

В первом параграфе, озаглавленном «Конституционно-правовые особенности и развития защиты достоинства человека в Республике Армения в контексте конституциональных реформ», Автором в системной целостности анализируются исторический ход конституционных развитий достоинства человека в Республике Армения и с точки зрения концептуальных подходов выделены основные этапы этих развитий.

На основе системного анализа концептуальных подходов и правовых источников дана конституционно-правовая формулировка достоинства человека.

Во втором параграфе, озаглавленном «Конституционные гарантии обеспечения достоинства человека в Республике Армения», автором классифицированы конституционные гарантии достоинства человека. Проведен системный анализ норм Конституции и положений, закрепленных в позициях, выраженных Конституционным судом.

В Заключении автором представлены основные выводы исследования в обобщенном виде.

**MARGARITA VARDANYAN, DAUGHTER OF ARAM
HUMAN DIGNITY PROTECTION IN THE REPUBLIC OF ARMENIA,
CONSTITUTIONAL AND LEGAL ANALYSIS**

12.00.02. –dissertation for requesting the academic degree of candidate of law in the profession of “Public Law”

The defense of the dissertation will take place on March 18, 2016 at 14.30 o'clock at RA State Management Academy's 041 Professional Council of Law at the RA SCC (address: 8 Kievyan Street, Yerevan 0028)

SUMMARY

The dissertation substantiates the topicality of the subject, presents the degree of the scientific research on the subject, the purposes and goals of the research, its object and subject, the theoretic, normative and methodological grounds, the scientific novelty, the scientific and theoretic and practical significance of the research, the testing of the results, the structure of the dissertation, as well as the provisions submitted for defense.

The first chapter of the dissertation entitled “**The Evolution of Formation and Development of Legal, Social and Philosophical Notions on Human Dignity**” consists of three subchapters.

In the first subchapter entitled “**The Theoretical and Legal Contents and Structure of Human Dignity**” the Author has performed a comparative, historical and legal analysis of different views and approaches to perceiving and interpreting the notion of the dignity of a person via the study of the different sides of the legal contents and structure of a person's dignity. Human dignity is not abstract; it is not a potential stable right but rather a complicated dynamic system with stable and variable elements. Human dignity with a number of its components permanently acts and is permanently realized, it acts as an inseparable part of a person's existence and development and is of dynamic nature.

In the second subchapter entitled “**The Correlation of Dignity and Honor in the Context of Law and Morality**” the Author presents a juxtaposed analysis of dignity and honor as judgments on legal and moral values and on the legal regulations thereof. Having studied the close ties and interaction of right and morality the Author arrived at an assertion that they significantly contribute to the importance of the role of those two regulators: the dignity and honor, to the increase in the efficiency of their functioning, to the stabilization and strengthening of social relations.

In the third subchapter entitled “**The Dignity as the Bases of Human Rights and Freedoms and as Human Feature**” the Author has referred to the initial perception of the term “Human Dignity” as an ethical category, as the bases of human rights and as a human feature. The aim of studying the term “Human Dignity” was first to reveal the contents of that notion, to study its historical evolution, further on to clarify its meaning and at the end to make precise the scientific and methodological cognitions on the subject matter.

The second chapter of the dissertation entitled “**The Challenges of International Legal Regulations for Protecting Human Dignity**” consists of three subchapters.

In the first subchapter entitled “**The Constitutional Models for Stipulating Human Dignity in Foreign Countries**” the Author has performed a comparative research on the constitutional models for stipulating human dignity right in foreign countries which enabled to make a conclusion that the legislative power evaluated the meaning of that term in the legal life of the society in a different degree. Proceeding from the foregoing we have specified three levels of constitutional models and the hierarchy therewith is conditioned by the legislative power's approach to the guarantees of citizens' dignity.

The distribution of constitutional models according to their levels depending on the guarantees for the protection of citizens' dignity enables the researcher in the field of constitutional right to decide what significance acquires the state of social policy and citizenship rights protection in different countries.

In the second subchapter entitled **“The International Legal Guarantees for the Protection of Human Dignity”** the Author has researched the complex system of international legal principles, norms, guarantees and mechanisms including the constitutional and legal institute for the protection of human dignity that is aimed at guaranteeing the preservation and protection of dignity. Structural and systemic analyses of the international legal regulations on “Human Dignity” were conducted and in the result of that analysis the international fundamental definers reflecting the axiological contents and significance of human dignity were specified.

In the third subchapter entitled **“The Conceptive Approaches of the European Court of Human Rights to Human Dignity”** the Author has revealed the legal positions and interpretations of the European Court of Human Rights (hereinafter the Court) that are of essential significance for guaranteeing the protection of human dignity. They are especially topical in the context of new constitutional and legal regulations and in defining common European legal criteria. The structural and systemic analysis of the doctrinal approaches expressed by the European Court of Human Rights regarding the protection, provision and preservation of human dignity enables to specify the complex of the fundamental international legal provisions that reflect the axiological contents of human dignity and serve as guarantees for ensuring, preserving and protecting human dignity.

The third chapter of the dissertation entitled **“The Constitutional and Legal Guarantees of a Person's Dignity in the Republic of Armenia”** consists of two subchapters.

In the first subchapter entitled **“The Constitutional and Legal Peculiarities and Developments of Human Dignity Protection in the Republic of Armenia in the Context of Constitutional Reforms”** the Author has tried to analyze within the systemic integrity the historical progress of the constitutional developments in person's dignity in the Republic of Armenia and has specified the main development stages in terms of conceptual approaches.

The constitutional and legal definition for the person's dignity was given based on the systemic analysis of the conceptual approaches and legal sources.

In the second subchapter entitled **“The Constitutional Guarantees for Ensuring Human Dignity in the Republic of Armenia”** the Author has classified the constitutional guarantees for human dignity. A systemic analysis of the constitutional norms and the provisions stipulated in the positions expressed by the Constitutional Court was conducted.

In the **Conclusion** the author has summarized and presented the important conclusions of the research.